

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱՂՕԹԱՄԱՑՈՅՑԻՆ

(Շար. տե՛ս «Բազմավիճակ» 1956, թ. 11-12, էջ 257)

ԳԼՈՒԽ Ը.

ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐ ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՂՕԹՔԻ

1. Փակակալ. — 2. Ժամկոչ. — 3. Եկեղեցական. — 4. Քահանայ. — 5. Եպիսկոպոս. — 6. Սարկաւագ. — 7. Դպիրներ. — 8. Փիլիսոփաներ. — 9. Դասեր. — 10. Ժողովուրդը:

Յովհ. Մանդակունիի սահմանած «պաշտոնեայք փառաւորութեանն Աստուծոյ» (159) էին բոլոր անոնք՝ զորս նախորդ գլխուն մէջ պարտական տեսանք ժամերգութեան, եւ իրենց բաժինն ունէին անոր մէջ: Ազատանդեղոս ի մի կը գումարէ եպիսկոպոսին հետ «զկարգս երիցանց եւ կամ սարկաւագաց կամ անագանոսաց (զպրաց), եւ որ այլ եւս ի պաշտոն տեսնուին» (627): Նոյնքը կը յիշուին եւ Յաճախապատումէն (94): Եւ Եղիշէի մէջ Ղեւոնդ կը զգացնէ՝ թէ Արտաղի մէջ էին «եպիսկոպոսունք եւ երիցունք եւ սարկաւագք, սաղմոսերգոյք եւ գրակարգոյք՝ իւրաքանչիւր կարգեալ կանոնաւ» (176) կամ իրենց սեպհական պաշտոններով՝ զոր կը մատուցանէին բանակին մէջ: Նոյն անձերը կը նշանակուին նաեւ ընդհանուր եկեղեցիներու հասարակաց աղօթքի մէջ՝ Սինայի ծանօթ յիշատակարանէն՝ 2. դարու, այսինքն է «երգիչք, ընթերցողք, կիսասարկաւագք, սարկաւագք եւ քահանայք, կարգեալք յընթեռնուլ, ի սաղմոսել եւ յերգել» (Բէռմէր Ա. 184): Իսկ մերս Յ. Իմաստասէր կը թուէ զանոնք այսպէս. «Նախկին զփաստուն, եւ զկնի նորա

հետեւեալ ըստ կարգի սարկաւագն. յետոյ ապա իրրեւ զվեհագոյն դերաստիճանեալն ի նոցանէ եպիսկոպոսն» (20, 22): Վերջինս միակ ըլլալով թեմին մէջ, սովորական պաշտոնեայ մը չէր, զի չէր կարող դառնալ բոլոր եկեղեցիներուն մէջ: Իսկ սովորականներու առաջինն էր քահանան. ատոր համար մեծն վարդապետն տան աղօթքը կը կատարուէր «քահանայիւք եւ այլ բարձրութեանն պաշտօնէիւք» ըստ Ղազարի (171): Նմանապէս կիսասարկաւագը, մեր քով ընդունուած դէպի միջին դար(1), անտես մնացած է ժամապաշտութեան մէջ:

Եղան հայ եկեղեցւոյ անջըութեան շրջաններ, ուր պակասեցաւ պաշտօնեաներու զանազանութիւնը հասարակաց աղօթքին մէջ: Այդպէս գտաւ Ն. Լամբրոնացին ԺԲ. դարուն. եւ չհանդուրժելով այդ վիճակին, դարձաւ նախկին դրութեան, «կարգեաց, կ'ըսէ Կիրակոս, զպաշտօն վանիցն (Սկեւոյի՝ ուր կը նստէր) ըստ օրինակի այլոց ազգաց՝ սարկաւագաւ եւ զպրաւ եւ անծածկոյթ գլխաւ, զոր յոլովք դարովն ի Հայոց» (63): Սակայն ողջամիտները հետեւեցան իր օրինակին, յատկապէս վանքերու մէջ, որով 1397ին Գ. Տաթևացին վրնայ գրել՝ թէ «յեկեղեցիս երեք են դասք պաշտօնէից. առաջին՝ քահանայք, եւ միջին՝ սարկաւագունք, եւ վերջին են սաղմոսողք» (Հրց. 624): Բայց այդ նորոգութիւնը ոչ ընդհանրացաւ եւ ոչ յա-

(1) Հացունի Հ. Վ. Հայ Եկեղ. 1911ի ազգ. տիւնհ. գործոց մէջ, 82:

բառեւեց, ինչպէս կը տեսնենք ստորեւ: Այժմ կը մնայ մեզ նկատել իւրաքանչիւր պաշտօնեայի դերը ժամակարգութեան մէջ:

1. — Փակակալ. — Ծառայութեան կարգով՝ առաջինն էր, ըստ Մաքենեաց Խրատներուն, հին կոչում ու պաշտօն, որով կ'անուանէ Փարպեցին զՊետրոս՝ «արքայութեան դռնապանն եւ փակակալ» (55), որ է եկեղեցւոյ դրան փակը կամ փականքը պահող, դռնապանն իսկ: Կոմիտաս կաթողիկոս իր արձանագրին մէջ ինքընքը կը կոչէ՝ երբեմն «եկեղեցապան» Սրբոյ Հռիփսիմէի(2), զոր Յովհաննէս պատմիչ «փակակալ» կ'ընէ: Յաճախ դործածուած է այդ բառը վարիչի կամ հոգաբարձուի իմաստով: Բայց մեր պառակային աւելի խոնարհ նշանակութիւն մ'ունի, իսկական դռնապանի, — Ղազարայ ըսածին պէս, — որ կը բանայ աղօթատունը, եւ ժամերգութիւն ակսելէն առաջ՝ կը պատրաստէ զայն լուցմամբ, խնկարկութեամբ ու ժամհարութեամբ (Յաւ. Ա): Ստորին կարգի աստիճանաւոր մը ըլլալու է, կամ սոսկ աշխարհական մը: Այս պառական աւելի որոշ է Անկիւրիոյ վանքին յիշատակագրին մէջ, ուր բարերար մը, 1475ին, կը սահմանէ եկամուտ մը եկեղեցւոյ նոյն պաշտօնեային, «թէ ի կարգաւորաց, թէ ի աշխարհականաց, թէ ի հաւատաւոր կանանց՝ ով որ լինի լուսարար(3), ինչպէս կը կոչուի այդտեղ փակակալը:

2. — Ժամկոչ. — Միջին դարն ստեղծեց այս պաշտօնեան, արդիւնք՝ ինչպէս կ'երեւի՝ զիւղերու կամ քաղաքներու ընդարձակութեան, ուր ժամհարի ձայնը չէր հասնէր ամէնուն. եւ կամ բոնութեան՝ զոր այլազգիները ի դործ կը դնէին երբեմն, խափանելով Հայոց կոչնակին ձայնը:

(2) Յովսէփեան Գ. եպ. Գրչութեան արուեստը, 6:

նր: Անշուշտ զատ էր փակակալէն, ըստ որում երկուքին գործերը զուգադիպելով, չէին կարող բարդուել նոյն անձին վրայ՝ առանց խափանելու զիրար: Այս պաշտօնեային երիցագոյն վկայութիւնը Բրոկարդին է, լատին ուղեւոր ի Կիլիկիա 1232ին, որ տեսաւ Հայոց ժամկոչին թափառումը փողոցներու մէջ (Բ. Բ): Յետոյ 1298ի յիշատակագիր մը կը յիշէ «զՎահրամ ժամակոչ»(4): Աւագ հինգշաբթիի ապաշխարողաց կարգին մէջ կայ Օրինեալ է ամենաւերջ աղօթքը, ուր կ'օրհնուի եւ «զժամակոչ քաղաքիս մերոյ», եւ որում նախկին ընթերցումն է Ս. Ղազարու 1387ի Մաշտոցին մէջ (թ. 148) «զժամհարդ եւ զհրաւիրողսդ յաստուածային պաշտօնսն», ուր կը դատուի (փակակալ) ժամհարը՝ (ժամակոչ) հրաւիրողներէն, որոնց վերջինները ըստ պիտոյից կրնային եւ մէկէ աւելի ըլլալ, ինչպէս կ'երեւի յոգնակի ձեւէն: Իսկ 1436ի (թ. 178) օրինակը կ'անարկէ լոկ ժամկոչին, «զսպասաւորսք. եկեղեցւոյս՝ զբարոյն ժամապաշտութեանն»:

Իր պաշտօնն էր՝ ինչպէս ըսինք՝ չըջիլ թաղէ թաղ, եւ երգով ձայն տալ հաւատացեալներուն. վերջին երկու Մաշտոցներու բաժին պէս՝ թէ դարբիէլեան փողոյն նման՝ «աղողական ձայն սորա տանջէ զսատանայ եւ զգաւրսն նորա, եւ զարթուցանէ զմեզ յարհնարանութիւն սուրբ Երրորդութեանն»: Առաքել Դաւրիթեցի կը պատմէ՝ թէ ԺԵ. դարու սկիզբները Վերին Հայաստանի մէջ տիրող անկարգութեան երեսէն՝ «ոչ լինէր լսելի ձայն ժամակոչի ի դեղօրայս» (221): Եւ Զաքարիա սարկաւագ յառաջ կը բերէ դէպքն Արտաշիլ քաղաքի «ժամկոչին», շուրջ ԺԵ. դարու կէսին, որ ի սկզբան մահմետականներու արդիւնամբ չկարենալով մերկել, «յամենայն դիչեր երթալ եւ հարկանէր զըրունս

(3) Գրչ. թ. 1103, 82 Ս. Ղազարու:

(4) Սրուանձտեանց, Թորոս աղբ. Բ:

և զերգս քրիստոնէիցն, զի եկեղեցին յաղօթս: Յետոյ հնարադիտութեամբ յաջողեցաւ հրաման ստանալ, եւ «բարձր ձայնիւ դռնէն» ըստ սովորութեան՝ ըսելով. «Օրհնեալ է Աստուած, օրհնեցէք զԱստուած» (Բ, 37): Պատմիչը կ'անուանէ զպաշտօնեայդ նաեւ աղօթկոչ ու ժամհար, յորում միացեալ կը թուին երկու պաշտօնները:

3. — Եկեղեցական. — Կոմիտասայ վերել յիշուած կոչումն է, զոր Մաքենեաց Սրատքը կու տան աստիճանաւորի մը՝ որ մասն ունի ժամերգութեան մէջ: Այսպէս Գիշերային աղօթքներու սկիզբը «զայ եկեղեցական կամ սարկաւազն (եթէ կար սա)», յատեանն, ... եւ տայ զառաջին Արքիմեայն յաւագերիցու դասն»: Նոյնը կրկնուած է ճաշուն եւ Երեկոյին եւս. բայց հոտ՝ «փակակալն կամ սարկաւազն» է (Յաւ. Ա). ապաքոյց՝ թէ փակակալ կարող էր ըլլալ փոքր աստիճանաւոր մ'ալ, ինչպէս ըսինք վերել, եւ առ ի չգոյէ սարկաւազին կամ եկեղեցականին՝ ինք կը վարէր նոյն պաշտօնը, ըսելով՝ ոչ միայն առաջին Օրհնեայն, այլ միւս քարոզներն ալ, որ տեսական էին սարկաւազին:

4. — Բախանայ. — Երիցադոյն պաշտօնէին յատուկ էր աղօթքներու բաժինը: Նախնական եւ ընդհանրական է անոր այս իրաւունքը եկեղեցւոյ մէջ: Եթերիա խօսելով Պաղեստինի վանականներու մասին, կ'ըսէ՝ թէ «քահանայք եւ սարկաւազունք ունին առ միանձունսն զօր հանապաղ երկուս երկուս կամ երկուս փոխանորդս, ոյք ըստ իւրաքանչիւր երգոյ կամ փոխի առնն զաղօթան» (5). ասիկա՝ քահանաները, իսկ սարկաւազները իրենց մասը, որ նշանակուած է ըստ անդամ: Այսպէս եւ Սուրբ Սահակացի հետեւեալ կերպով վեր կը հանէ անոր պատիւը, խօսելով

(5) Դիւլէն, 513:

Օրհնութիւն եւ փառք Հօր Կցորդի մասին. «Բովանդակ եկեղեցին շխարհ համեմատիլ քահանային եւ գլխաւորել զօրհնութիւնսն. այլ պէտք են քահանային՝ զնոցա ասացեալ սաղմոսերգութիւնն խորանձնապէս օրհնութեամբն Աստուծոյ մատուցանել» (43): Բ. Կեղծ Օձնեցին անոր կու տայ աղօթքներն ալ. «Միջնորդ Աստուծոյ եւ մարդկան ի մէջ անկեալ, զամենեցուն աղօթս ընծայ մատուցանէ Աստուծոյ» (112): Արդէն Մաքենեաց Սրատքն ալ աղօթքները միշտ քահանաներու կու տայ (Յաւ. Ա.): Իրենց անկէր դարձեալ «անտարան կարգալ» ժամերգութեան պահուն, ըստ Շնորհալիին (Նմկ. 144) եւ Մաքենեաց Սրատքներուն. ուր պատարագին մէջ սարկաւազին էր այդ: Եղեր է ժամանակ մը, ուր զպիւրները յանդգնեցին ի բացակայութեան քահանայի ժամերգել. եւ ասոր դէմ կարգեց Ներսէս Աշտարակեցին այս կանոնը. «Դպիրք ի պաշտաման եկեղեցւոյ առանց քահանայի մի՛ իշխեսցեն կալ» (Ժա):

Նմանապէս պաշտամունքի սկզբնաւորութիւնը քահանային սեփական էր միշտ. եւ նա պատշաճութեան համար կը թողուր «ի մեծադոյն առաջնորդն» կամ «վեհապետին», կ'ըսեն Մաքենեաց Սրատքը, եթէ ներկայ էր: Այդ իմաստով Երեկոյի սկիզբն ալ ըսել կու տան՝ «Աւրհնեա տէր կամ հայրապետ կամ վարդապետ»: 1284ի Աւետարանացոյցը, 1438ի եւ յաջորդ Տօնացոյցները Զատիկի ձրապալուցի երեկոյին կը գրեն. «Ասէ եպիսկոպոսն ձայնիւ» ճԺԲ սաղմոսը, որով կը սկսէր ժամակարգութիւնը: Սրտ. ժամող. կարգաւորութեան նոյնպէս կը սահմանէ՝ թէ «Տէր եթէ շրթանց» սկսուած ծերունեաց եւ պատուաւորացն է, որք դասադրուիք են: Իսկ (եթէ) եպիսկոպոսը կամ վարդապետը դոն, նոցա է՝ եւ ոչ դասադրիւն»: Նոյն Սրատքը կ'ընդարձակէ պատուոյ սահմանը, եւ «ի տօնի հանդիսաւոր աւուրց եւ կիւրակէից (եւս) պատուաւորացն» կը թողու գիշերային

ԶԲԷն գոհանամքն ալ: Նոյնպէս եւ Արեւադալի սկիզբն «Աւագերիցուն» կու տայ. «ապա թէ եպիսկոպոս կամ վարդապետ լինի, նոցա է»:

5. — Եպիսկոպոս. — Սուրբով կը զգացնէ եպիսկոպոսին մէկ իրաւունքն ալ: Երկմասն աղօթքներու մէջ՝ ուր Սաղաղութիւն տալ կայ, աղօթամատոյց քահանային կը պատկանի (53). իսկ արտաքոյ աղօթից՝ «զՍաղաղութիւնն՝ եպիսկոպոսն յորում եկեղեցւոյ եւ հանգիստի, առնու յԱստուծոյ եւ տայ ժողովրդեան, զի նա գլուխ քահանայութեան» (43): Հին աւանդութիւն էր՝ որ «վերակացու եկեղեցւոյն» կու տար զայն՝ ըստ Ոսկերեւանի (6): Գր. Տաթեւացիին ժամանակ մասամբ փոխուած է սովորութիւնը: «Զիւրաքանչիւր ժամու առաջին աղօթիցն, կ'ըսէ նա, եպիսկոպոսն ասէ զՍաղաղութիւնն, եւ զայն՝ քահանայն որ աղօթէ»: Առաջին աղօթքներուն մէջ հասնելուն՝ «քահանայն աղերսէ զեպիսկոպոսն, եւ նա տայ զՍաղաղութիւնն» (Հրց. 625): Մաքենեաց Սրատքն եպիսկոպոսին կը թողուն զայն նաեւ սաղմոսներու զուգանքներուն մէջ, ինչ որ համաձայն է խոսքովեան դրութեան: Նոյնպէս Թովմա Մեծօփեցիի ժամադիրքը գիշերային ԶԲԷն գոհանամքին յաջորդող մանր մասերուն մէջ Սաղաղութիւն մը կը դնէ եպիսկոպոսին. միակ օրինակը զոր ունի, միւս տեղերուն մէջ լռելեայն հաստատելով Տաթեւացի (իւր) վարդապետին տուած տեղեկութիւնը:

6. — Սարկաւազ. — Աստուածային պաշտամունքի մէջ հինէն ի վեր հաւատացեալներուն բարեկարգութեան հսկողն էր սարկաւազը. եւ իրեն կը պատկանէին քարոզներն ալ, որոնք աղաքարութիւններ էին ժողովուրդին, եւ բուն իր գործը: Այդ պատճառաւ անպակաս եղեր են սարկա-

(6) Մեկն. Թղթոց Պաղտի, Ա. 559, 560:

ւազները երէցներուն քով, ինչպէս տեսանք վերել Եթերիայի վկայութեան մէջ, եւ էր նաեւ Հայոց մօտ: Պապ Թադաւորը գրաւելով եկեղեցիներու կալուածները, նուագեցուց, կ'ըսէ Փաւստոս, պաշտօնեաներու թիւն ալ, եւ «ըստ հոգոյն թողոյր երկուս երկուս առ դիւղ մի՛ երէց եւ սարկաւազ» (231): Անձեւացեաց եպիսկոպոսը կը զգացնէ անոր դերը ժամակարգութեան մէջ այսպէս. «Սարկաւազն քարոզէ ընդ ամենայն դուրդայի՝ Եւ եւս խաղաղութեան դատը աղաչեցուց» (40): «Սարկաւազն ձայնէ առաջնորդին՝ թէ Օրհնեալ»՝ եւ թէ ժողովուրդն «աղաչել հրամային ի սարկաւազէն վասն խաղաղութեան» (43): Մաքենեաց Սրատքն յիշեց զայն վերել միեւնոյն պաշտամունքին մէջ: Գր. Տաթեւացիին նոյնը կը վկայէ՝ ըսելով. «Ոմանք սաղմոսեն. եւ սարկաւազն ի տիպ հրեշտակին տայ զՕրհնեայն ի քահանայն, ... եւ նա վերընծայէ առ Աստուած զՕրհնութիւնն, եւ զՍաղաղութիւնն բերէ մեզ պարգեւ» (Հրց. 625): Քարոզները «սարկաւազին» կու տան նաեւ Մարիունի եւ այլ ժամադիրք: Պաշտամանց մէջ կային եւ խնկարկութիւններ, որ նոյնպէս սարկաւազին յատուկ էին, ինչպէս պատարագին մէջ:

Եղան ժամանակներ՝ ուր սարկաւազները պակսեցան եկեղեցիէն: Այսպէս Ն. Լամբրոնացիին կը գրէր 1177ին՝ թէ «առ մեօք այս կարգ բնաջինջ է յեկեղեցւոյ»: Անոր զանցառութիւնը կը զգացնէ Մաքենեաց Սրատքն ալ, քարոզները տալով անոր կամ ուրիշ պաշտօնէի, ինչպէս վերել յիշելով հանդերձ «սարկաւազունքն» ալ: Տարսնի առաջնորդը թէպէտ սարկաւազներ կարգեց իր վիճակին մէջ, — որոնցմէ կ'երեւին յետոյ ուրիշ մենաստաններու մէջ ալ, — բայց չունեցող եկեղեցիներուն խրատ կու տար՝ որ անոր պաշտօնը կատարէ ուրիշ քահանայ մը (Պոր. 227): Այդպէս ալ եղաւ. եւ եկան անձեր՝ որ տեսնելով այդ բռնադատ փոխանակութիւնը, քահանայական պաշտաման մասն

համարեցան քարոզները, և աշխատեցին փարուեցան անոնց հետ: Չոր օրինակ կարգ մեկն. ժամու աղօթից, ԺԴ. դարէն, կը գրէ. « Ի մէջ անցեալ քահանայն՝ ի խորհուրդ Փրկչին, ... քարոզէ» Զարքուցեալս (297): Նոյնպէս և խոր. ժամու. կարգաւորութեան, շարադրութիւն ԺԶ. դարու, կ'աւանդէ՝ թէ Արեւադալի մէջ «ըզարդն աւագ երէցն ասէ, Փառաւորեցուք, և փոքր երէցն ասէ Զառաւորեցուք» (Յաւ.): Ինչպէս կը տեսնուի, սարկաւագի ձեւին ներքեւ չեն պաշտօնիր հոտ քարոզները, այլ բաժնուած քահանաներու մէջ, նման միւս աղօթքներուն:

7. — Դպիրներ. — Նախնեաց յիշած վերջին պաշտօնեաներն էին ասոնք, և իրենց կոչումը դասական հայերէնի մէջ կը նշանակէր քարտուղար. իսկ եկեղեցական իմաստով՝ ընթերցող և երգող: Ուր Ագաթանգեղոս զայն յունական անագանոս (անագաստէս = ընթերցող) կոչեց վերել: Յաճախատուածը դպիր կ'ըսէ (94): Իրենց կրկնակ պաշտօններուն պատճառաւ, որ կը բաժնուէին զանազան անձերու վրայ՝ ըստ յարմարութեան, կոչումներդ ունէին իրենց հոմանիշներն ալ. օրինակի համար Յովիչէ կ'ըսէ «սաղմութեան գողի և գրակարդացի» (անդ): ՅՅ. Մանգալունին մէկ հոգիի կու տայ երկու գործերը. « կորուսանէ զսաղմութեանը սատանայ, եթէ ... ոչ զպատգամսն Աստուծոյ պատմեացն և զօրհնութիւնս նորա երգեսցեն» (25): Նոյն իմաստներով կը գտնուին և խորհուրդով քով՝ «դպիրքն, գրակարդացիք, սաղմութեան գողքն» (Պար. 43):

Պաշտօնէին առաջին գործն էր ուրեմն ընթերցումը: Ըստ այսմ՝ Սահակայ տեսիլքին մէջ «ընթերցողն կամաւ յերկարէր ըզկարդացմունսն» կը գրէ Փարպեցին (80): Հին Մաշտոցը Ս. Ղազարու թ. 457 օրինակին մէջ՝ ԺԱ. դարէն՝ ունի « Կանոն

ձեռնադրութեան անագանոսաց, որ լինին գրակարդացիք». և որոնց վրայ ձեռնադրելը կ'աղօթէ այսպէս. «Արժանի արա զսա ամենայն իմաստութեամբ և խելամտութեամբ զաստուածեղէն բանից քոց կարդացմունս ատենը»: Ն. Լամբրոնացին կը ճշտէ անոր կարդացած գրքերն ալ. «ընթերցումը զմարդարէս և զընադիրս (Ս. զրոց) և զվարդապետականս» (Պար. 85): Սակայն միջին դարուն Գիշերային ժամու ընթերցումը քահանաներու անցած է, ինչպէս կը գրէ Մաքենեաց խորհուրդ. «Գիշերն աւագերիցու դասուն է, նմա որ ԶԲԷճ գոհամարմն ասաց»: Այս պատճառաւ, երբ մեծամեծար հիւր մը ներկայ ըլլար, առ ի պատիւ անոր կարգաւ կու տային: Այսպէս Անանիա կ'ըզ. Մոկացի (956ին) կը գրէ՝ թէ ի Գանձասար աղօթքի պահուն՝ «եկին բերին յեղակարծս զըրբունս ինչ Յովհաննու Ոսկերերանի՝ կարգաւ զպատմէնս՝ վերահասու եղաք շաբաթանութեանն»: Անվաւերական մէջը Հայոց քրիստոնէութեան դարձի մասին, որ մեծ հաճոյք կը պատճառէ իրեն(7):

Միւս պաշտօնն էր ըսինք՝ սաղմոս կամ «զօրհնութիւնս» Աստուծոյ երգել, — ըստ որում առաջին դարերուն մեր հոգեւոր երգերու նիւթերն էին ըսկ սաղմոսները, ինչպէս պիտի տեսնենք, — որոնց համար կոչուած է նաեւ սաղմոսասաց՝ Ոսկերերանէն (Թղթ. Բ, 479), սաղմութեան գող՝ ՅՅ. պատմիչէն և Մաքենեաց խորհուրդէն (Յաւ. Ա), փառալու (յն. փառալուս՝ սաղմոսանուագ) Ա. Եղբ (Ը, 5), և ՅՅ. Իմաստասէրէ (20), և երգեցիկ եկեղեցւոյ՝ Կիւրղի կոչումն ընծայութեանէն (258): Աւելի փայլուն էր իրենց դերը քան ընթերցողին, և կը պահանջէր նաեւ բաղմութիւն անձերու, և իրենց կարեւորութեան ու կազմութեան մասին արեւմուտքի մէջ՝ կը խօսի Լիլերկ առանձին յօդուածով(8): Սահակայ տեսիլքին մէջ ըստ

Փարպեցուն՝ իրենց դերն յատկօրէն անջատ է միւս պաշտօնեաներէն, որոնք անոնց երգելու պահուն նստած էին, և կը ներհնէին՝ տօնին պատճառաւ խոնջութեանէն (80): Ու երգիչներդ կը շարունակէին մնալ և յիշուիլ երկար ժամանակ և մեր քով: Կոմիտաս կ'ըզ. Է. դարուն նամակի մը մէջ ողջոյն կը յղէ «ի սարկաւագաց և ի դպրաց»(9): Տեսանք վերել անոնց զոյգութիւնը խորհուրդով վկայութեան մէջ ևս: Սակայն իսկական և ձեռնադրուած դպիրները երթալով կը նուազէին, և երգիչներու խումբը լրացնելու համար՝ անոնց մէջ կը խառնուէին նաեւ աշխարհական մանուկներ: Այսպէս Ար. Լաստիվերտցին կը գրէ՝ թէ Կարնոյ 1053ի աւերամար «հատու երգ օրհնութեան ի բերանոյ դպրաց և տղայաց» (61): Այս իմաստով հասկնալու ենք Մաքենեաց խորհուրդէն բացատրութիւնս ալ. «իսկ սաղմութեան գողքն զսաղմոսն ասեն» առաւօտուն (Յաւ. Ա.):

Իսկ Ն. Լամբրոնացին բոլորովին անյայտացած դատելով ծանօթ վիճակներու մէջ ձեռնադրեալ դպրութիւնը: «Մուսկեալ է բնաւին, կ'ըսէ, ի մտաց մերոց թէ այլ աստիճան կայ յեկեղեցի՝ բայց ի քահանայից և ի յեկեղեցի» (Պար. 87). այսինքն թէ փոքր աստիճանաւորներ չէին պահեր առաջուան պէս, այլ իսկոյն քահանայութեան կը բարձրացնէին: Սակայն մենաստաններու մէջ աւելի դիւրաւ կը գտնուէին տակաւին դպիրներ, զորս յիշեց Գ. Տաթեւացին: Յամենայն դէպս նուազած էր անոնց թիւը, և շատ տեղերէ ջնջուած ի սպառ:

Դպիրներու յատուկ էին ևս այն սաղմոսները՝ որ ի թիւ կ'ըսուէին, ինչպէս կը գրէ Մաքենեաց խորհուրդ. «սաղմոսներդ ունէին զսաղմոսն ասեն». և թիւով երկուք են. «այն որ զգորդայն սկսաւ» և «միւս ընկերն» (Յաւ. Ա): Նաեւ ըստ Գ. Տաթեւացիին՝ իրենց դերն յատկօրէն անջատ է միւս պաշտօնեաներէն, որոնք անոնց երգելու պահուն նստած էին, և կը ներհնէին՝ տօնին պատճառաւ խոնջութեանէն (80): Ու երգիչներդ կը շարունակէին մնալ և յիշուիլ երկար ժամանակ և մեր քով: Կոմիտաս կ'ըզ. Է. դարուն նամակի մը մէջ ողջոյն կը յղէ «ի սարկաւագաց և ի դպրաց»(9): Տեսանք վերել անոնց զոյգութիւնը խորհուրդով վկայութեան մէջ ևս: Սակայն իսկական և ձեռնադրուած դպիրները երթալով կը նուազէին, և երգիչներու խումբը լրացնելու համար՝ անոնց մէջ կը խառնուէին նաեւ աշխարհական մանուկներ: Այսպէս Ար. Լաստիվերտցին կը գրէ՝ թէ Կարնոյ 1053ի աւերամար «հատու երգ օրհնութեան ի բերանոյ դպրաց և տղայաց» (61): Այս իմաստով հասկնալու ենք Մաքենեաց խորհուրդէն բացատրութիւնս ալ. «իսկ սաղմութեան գողքն զսաղմոսն ասեն» առաւօտուն (Յաւ. Ա.):

Լացիին «երկուքն սաղմոսեն» (Հրց. 624): Սակայն դպիրներուն պակսելովը՝ քարոզներու պէս սաղմոսներն ալ քահանաներու անցան. և խոր. ժամու. Կարգաւորութեան՝ օրուան բոլոր փոխերը ընդհանրապէս «աւագ երիցուն» և «փոքր երիցուն» ըսել կու տայ, և դպիրներու յիշատակութիւն չունի երբեք:

Դպիրներուն եղած ժամանակ անոնց զործն էր նաեւ մոմերը կրել, ինչպէս Մաքենեաց խորհուրդ կ'ըսեն. «Լուցանեն դրպիրքն մոմեղէնս» պատարագի ժամանակ: «Կարդ մեկն. ժամու աղօթից » կը յիշէ զատուր իւզարեցից աւետարանի ընթերցման պահուն ևս՝ «Լամպարակալին» ձեւով (311): Իսկ բուն դպիրներու չգոյութեան՝ ԺԱ. դարու Մաշտոցը կը գրէ աւելի գործնական կերպը, թէ եկեղեցւոյ նաւակատիքի հանդէսին «երթիցեն մանկուցն առաջի ուխտին մոմեղինաւ վառելովք»:

8. — Փիլիսոփաներ. — Դպիրներուն սպասուէին ևս միւս կողմէ եկեղեցական երգեցողութեան ստացած մեծ կարեւորութեան յատուկ անկան այս նոր պաշտօնեաները, որ էին ճշմարիտ երաժիշտներ՝ ձայնեղ ու վարժ, առանց խտրութեան աստիճանի. բայց առ հասարակ քահանայական կամ եկեղեցական դասէն, մանաւանդ վանքերու մէջ, ուր աւելի դիւրաւ ու բաղմութեամբ կրնային մարդուիլ արուեստին: Առաջին անգամ այդ կոչումն ու սահմանը կու տայ մեկ Ն. Շնորհալին ի մեկն. Բարձրացուցէքին, զերկով այսպէս. « Ունիմք սոփորաբարձ ասել փիլիսոփայ՝ որք յերաժշտական արհեստս կատարեալք են »(10), յեղաշրջելով յունարէն բառից իմաստը: Ստ. Օրբելեան նկարագրելով Տաթեւի Ուխտն Թ-Ժ. դարերու մէջ, որ անոր պայծառագոյն շրջանն էր, «յի էր, կ'ըսէ, և ծովամատոյց փիլիսոփայիւք

(7) Արարատ տմ. 1897, 136:

(8) Կարբու, Գ. 351-365:

(9) Սերէոս, Գ. ԺԵ:

(10) Հաւաքումն յտեղն. ի Ս. Ղազար:

Երաժշտական երգոց» (165) : Աստուածա-
յայտնութեան Գրքերն, ուր 1284ի Աւե-
տարանացոյցը կը գրէ՝ թէ «զգենուն քա-
հանայքն», 1449ի, 1494ի եւ այլ Տօնա-
ցոյցները կ'ըսեն «զգենուն փիլիսոփայքն»
եւ կ'երգեն Կանոնադրի մասը : Զգենուդ
ալ նշան է՝ թէ եկեղեցական էին : 1284
թուին Մշոյ Ղազարու ուխտին մէջ կը յիշ-
ուին հինգ «փիլիսոփայք» : Յուսիկ, Ռե-
տակէս, Աւետիս, Ստեփանոս ու Ներ-
սէս(11) վանականներ նոյն մենաստանին :
Իսկ մեր 1315ի Մանրութեան մէջ կ'աւ-
նարկուի «փիլիսոփային Ստեփանոսի» որ
մականունն Ստիկ կոչուի, եւ ուրիշներ :
Փիլիսոփային հոմանիշը կը կիրարկէ Մտ.
Ուսուցիչը, պատմելով թէ Պետրոս Գե-
տադարձ իր հետ Կոստանդնուպոլիս կը
տանի բաղամթիւ պաշտօնեայ, որոնց մէջ
«եւ երաժիշտ» (122) : Եւ 1342ին կը վախ-
ճանի «խմաստուն եւ հանճարեղ երաժիշտն
Թորոս աւարեբէջն թափրոնց»(12) :

9. — Դասեր. — Սկիզբէն եկեղեցւոյ
երգչները բաժնուած էին երկու խումբե-
րու, եւ տեղով դասուած իրարմէ, — ինչ-
պէս պիտի տեսնենք Թ. Ղլխուն մէջ, — ո-
րով փոխ առ փոխ կ'երգէին սաղմոսներու
տունները : Այս դրութեան երեցագոյն յի-
շատակութիւնը Հայերու մէջ՝ կը գտնենք
Եղիշէի մէջ, որ հարաւային միանձանց
սաղմոսերգութիւնը կը նշանակէ «փոփո-
խելով», այսինքն փոխ առ փոխ երկու-
տեք : Ընդհանուր դրութիւն էր այս(13),
որով ՅՏ. Իմաստասէր 719ին վըրէր
« պաշտել զՍոնարհեցոյ վերաձայնու-
թեամբ ըստ դասուց » (29), եւ Տաթևա-
ցին 1397ին՝ թէ զսաղմոսերգութիւնն «եր-
կու դասք պաշտեն յեկեղեցիս» (Հրց.
636) : Եղիշէի փոփոխել ըստ յարմարն է
փոխն, որուն կը հանդիպինք միջին դա-

րուն՝ փոխ առ փոխ առ փոխ սաղմոսաց կամ
անտիփոնոսի իմաստով : Ն. Լամբրոնացին
սաղմոսներու մեկնութեան մէջ կ'ըսէ՝
«յիւրաքանչիւր փոխ սաղմոսաց», եւ
Վանական Վրդ. իր Հարցմանց մէջ՝ «սաղ-
մոսաքաղ փոխերն» : 1287ի տօնացոյցը
Տեառնընդառաջի նախատօնակին կը գրէ.
«սաղմոսաքան եւ զայլ փոխերն եւ զա-
ղօթանին» : Եւ 1284ի Աւետարանացոյցը՝
թէ յետ Խաղաղականի Տէր լոյսին «զաւուր
զիրքն կարգա, եւ զփոխին աղօթքն սաղ-
մոսին» : Իսկ նոյն զրչադրին յարած Առա-
ջարանն երկու խումբի բաժնած է փոխե-
րուն տուններն ի զերբութիւն զպիւրներուն :

Երգերու կանոնաւորութեան համար՝
դասերուն մէջ կային մէյմէկ յատուկ պաշ-
տօնեայ, որ Եղիշէի կը կոչուին առաջ-
նորդ դասուց (Խրտ. 161) : Ար. Լաստի-
վերոցիէն՝ դասալուսիք. Մաքենեաց Խը-
րատներուն մէջ՝ դասալար. զոր օրինակ՝
Գրիշէն յետ Տէր զի բաղմին «փառս տան
յաւադերիցու կողման դասալարն», կամ
Կանոնադրին «զկրկնակն դասալարն ա-
սէ» : Գրիշ մը 1442ին կը յիշէ «զԱբրահամ
արեղայն զդասալարն» : ուրիշ մը 1457ին՝
Արճէշի եկեղեցւոյն անանուն դասալարն.
երրորդ մը 1429ին՝ Հոգեհանգիստ ուխտին
«զԹորոս դասալարն»(14) : Ապացոյց՝ թէ
հաստատունն պաշտօն ու տիրոջն էր այդ :

Մաքենեաց եւ հետագայ Խրատներուն
մէջ կը յիշուին «Աւագերիցու դասն» եւ
«Աշակերտի դասն» : Առաջինն էր այն՝ ո-
րոնց կողմն էր օրուան ձայնը, ԱԶ, ԱԿ
եւ այլն. իսկ Աւագերէց՝ նոյն դասին ա-
ռաջին քահանան էր : Յիշեալ երեցագոյն
Խրատքը խօսելով զիշերային վերջին ա-
ղօթքին մասին, կ'ըսէ. «Որ դաս աղօթս
ասէ՝ Աւագերէց նա է» : այսինքն այդ ա-
ղօթքն ալ նոյն պաշտօնեային կը վիճա-
կէր : Իսկ ձայնին հախառակ կողմն էր
«Աշակերտի դասը» (Յաւ. Ա) : Վարդան

արեղայ (1365) կը կիրարկէ «Երեցու դաս,
Երեցութեան դաս, Աւագերիցուն դաս» :
Իսկ անձերը կը կոչէ «Աւագերէց» եւ «Ա-
շակերտ» : Վերջինովս իմանալով իր դա-
սին զլիսաւորը, որ նոյնպէս քահանայ էր,
եւ ատոր համար իրեն սկսիլ կու տայ վե-
ցերորդ ժամու պաշտօնը : Գր. Խլաթե-
ցին կ'անուանէ պարզապէս «Ձայնի դաս»
եւ «Կողմ դաս» եւ համառօտ ձեւով՝
«Ձայնին է» եւ «Կողմանն է» (Յաւ. է) :
Իսկ Խրտ. Ժամդ. Կարգաւորութեան վը
սահմանէ «Աւագերէց» եւ «Փոքր երէց» :
«Աւագերիցու դաս» եւ «Փոքր երեցու
դաս», հաստատելով եւ ինքն Աշակերտի
եւ Փոքր երէցի հաւասարութիւնը :

Նոյն Խրատքը վը գործածէ նաեւ «Աւագ
աշակերտ» եւ «Փոքր աշակերտ», իմանա-
լով երկու կողմերու կրտսեր քահանանե-
րը : Զոր օրինակ «Սուրբ եւ տէր Աստուած
մեր» աղօթքը, կ'ըսէ, Աւագերիցու դասն՝
«Աւագ աշակերտին է» : Եւ գիտենք՝ թէ ա-
ղօթքները քահանաներուն յատուկ են : Ընդ
հակառակն Արեւադալի առաջին աղօթքն
«Ի Փոքր երեցու դասէն Փոքր աշակերտին
է ասեն» : Որով իւրաքանչիւր դասի մէջ
կան երկու երկու երեցունք. Աւագ երէց եւ
Աւագ աշակերտ. Փոքր երէց եւ Փոքր ա-
շակերտ :

Թէ ինչ կանոնով այդ կոչումները
կ'անցնէին մէկ դասէն միւսը, կը բացա-
տրէ նոյն Խրատքն այսպէս. «Որ առաջի
աւրն Աւագ երէց եղեւ, երկրորդ աւրն
Փոքր երէց է. եւ ի յերկրորդ օրն Աւագ
Աշակերտ կոչի, զի այն աւուրն Աւագ ե-
րէց ունի իւր դասն. իսկ ի չորրորդ օր
Փոքր աշակերտ կոչի, զի Փոքր երէց ունի
իւր դասն» : Այսպէս իւրաքանչիւր դասի
զոյգ քահանաներու զլիսաւորն օր մ'Աւագ
երէց է եւ միւս օրը Փոքր երէց. իսկ կըրտ-
սերն Աւագ երէցին հետ կ'ըլլայ Աւագ ա-
շակերտ, եւ Փոքր երէցին հետ՝ Փոքր ա-
շակերտ : Այսու կը հեռանայ Մաքենեաց
սահմանէ, որ ատոր Փոքր երէցը կ'ան-
ուանէ Աշակերտ :

Ձանազան Խրատներ՝ զորս կը զետեղենք

մեր աշխատութեան վերջը, կը նշանակեն
պաշտօններու իւրաքանչիւր քարոզին, ա-
ղօթքին, փոխերու եւ երգերու ո՛ր դասին
պատկանիլը, որուն շատ վարեւորութիւն
տրուած է՝ խափանելու համար շփոթու-
թիւնները, որ կրնային յառաջ դալ առանց
այդ առաջնորդութեան : Դիտելի է՝ որ
այն եկեղեցիներուն մէջ՝ ուր չկար բարձր
աստիճանաւոր, որուն անկ էր միշտ սկսիլ
ժամերգութիւնը, ըստ Մաքենեաց Խրատ-
ներուն եւ Վարդան արեղայի՝ օրուան ժա-
մերուն սկզբնաւորութիւնը փոխանակաւ
կ'անցնէր մէկ դասէն միւսին : Այսպէս Ա-
ւագերէցին էին Գիշերայինը, Երրորդ,
Իններորդն եւ Խաղաղականը. եւ Աշակեր-
տին՝ Արեւադալը, Վեցերորդն եւ Երեկո-
յինը : Իսկ վային երգեր, որոնց մէջ երկու
խումբերը կը միաբանէին՝ անոնց կարե-
ւորութեան պատճառաւ, ինչպէս կը գրէ
Տաթևացին. «Երբեմն համաձայնին երկու
դասքն, որպէս ի Փառք ի բարձունս եւ
յայլ երգան» (Հրց. 632), զորս պիտի տես-
նենք մեր Բ. մասին մէջ :

Սեպուհոյ Խրատքն աւագերէցութիւնը
կը կապէ օրուան ձայնին հետ հետեւեալ
կերպով. «Յորժամ թուականն Փարտ (ան-
զոյգ) լինի, եւ առջի կանոնն երանեալն
(որ է սաղմոսականն), նա աւագերիցու-
թիւնն աշակերտեան դասուն է. եւ յորժամ
ճուխտ լինի թուականն, եւ առջի կանոնն
երանեալն, նա աւագերիցութիւնն ձայնա-
կողմեան դասուն է : ... Այս է ձայնաւոր
եւ կողմնաւոր առեւի» : այսինքն աւագե-
րէցութեան զէպի ձայնի կամ կողման դա-
սը տարուիլը կամ անցնիլը : Իսկ ժամա-
նակի հասկացմամբ՝ «Աշակերտ եկեղե-
ցւոյն այն է՝ ուր աւագանն է, եւ ձայնա-
կողմն՝ հարաւային դէհն է» (Յաւ. է),
ինչ որ հակառակն է մեր ուրիշ երեցագոյն
մատենագրաց շատերու իմացման մէջ(15) :
Զոյգի եւ անզոյգի յիշեալ սահմանն ունի

(11) Անդ :

(12) Գրչ. Թ. 511 Ս. Ղազարու :

(13) Կարբու, Բ, 2282-2319 :

(14) Նօտարք Հայոց, 129, 186, 92 :

(15) Տե՛ս Հացունի Հ. Վ. Պատարագաւատոյց,

եւ Տաթևացին այսպէս. «Յորժամ թիւն առաջին լինի, որ է Փարտ, առաջին ձայնն աջ դասուն է, եւ կողմն՝ ահեակ. եւ յորժամ թիւն երկրորդ լինի, որ է ջուխտ, առաջին ձայնն ահեակ դասուն է, եւ կողմն՝ աջ» (Հրց. 64): «Խրատք Իւղարերից աւետարանացն» 1480ին՝ այն դասը, որուն կողմն էր բուն ձայնը, կը կոչեն «ձայնի տէր», եւ կողման դասը կ'անուանեն «աշակերտի դաս» (Յաւ. Ե. 1):

10. — Ժողովուրդը. — ա. Սա հին ժամանակ սոսկ ունկնդիր չէր երթար եկեղեցի՝ ինչպէս այժմ, այլ ունէր եւ ինք չափաւոր բաժին մը պաշտամանց մէջ. այսինքն քահանային ու սարկաւազին կամ քարոզներու պատասխաններն ինք կուտար: Այսպէս իրեն յատուկ էր ըսել «Ամէն»՝ որով կ'աւարտէին քահանայական աղօթքներն ըստ առաքելական սովորութեան (16), որ աւանդուեցաւ ընդհանրական եկեղեցւոյ, եւ մեր ազգին եւս: Փաւրտոս վր պատմէ՝ թէ Զուրթ երիցուն աղօթելու ժամանակ՝ «Բազում մարդիկ ամբոխի (որ) ժողովեալ էին, ասացին զԱմէն» (175): Յ. Մանդակունի խրատութիւն խօսքերուն եւ օրհնութեան առ Վահանեանս՝ «ասացեալ ամենեցուն զԱմէն, պատրաստեցան ի պատերազմ», կը գրէ Ղազար (393): Նոյն սովորոյթը կը շարունակէ տակաւին Ժ. դարուն, ուր Խոսրով կը վկայէ՝ թէ ԶԲԷ գոհամաբին աւարտելուն «ժողովուրդն միարան ասեն զԱմէն» (25). նմանապէս միւս աղօթքներու վերջն ալ (30, 31, 42, 87):

Ոսկերեան կ'ըսէր ժողովրդեան՝ թէ երբ առաջնորդը Խաղաղութիւն կու տայ, «ասացէք եւ դուք՝ եւ ընդ հոգւոյդ քում» (17): Նոյնպէս էր եւ մեր քով ու կը յարատեւէր Խոսրովի օրով, որ կ'ըսէ՝ թէ «ժողովուրդն... ձայնն միարան՝ եւ ընդ հոգւոյդ քում», եւ սարկաւազին «Աս-

տուծոյ երկրպագեցուք» հրամանին՝ նոյնպէս «ասեն միարան՝ Առաջի քո Տէր» (22, 27): Այսպէս նաեւ քարոզներու պատասխանները. «ժողովուրդն ասեն՝ Կեցո Տէր» (15, 139). «ժողովուրդն ասեն միարան՝ ... Շնորհեա Տէր» (16). «ԳՏէր ողորմեայն առ հասարակ վերածայնեն» (18). «ժողովուրդն... ասեն միարան՝ Բեգ տեսունդ յանձն եղիցուք» (19): Եւ դարձեալ՝ թէ «ամենեցուն միարան է իշխանութիւն ի սարմոսն, եւ ի փառս (Փառք Հօր) դուրդայիցն, եւ ի քարոզութեանցն վկայութեան» (42, 43), որ եւ մեր կոչած պատասխանները:

Սակայն ժողովրդեան ցրտութիւնն ու տղխտութիւնը, որ կը յայտնուի մանաւանդ դէպի ԺԲ. դար՝ ինչպէս նկատեցինք, անոր բերանէն վ'անէ իր բաժինը ու դպիրներուն կու տայ. որով Մաքենաց Խրատքը կ'ըսեն՝ թէ յետ Զարքուցեալ քին «Կեցո տէրն աշակերտի դասուն է» եւ «Տէր ողորմեայն... աւազերեցի դասին է». միայն սաղմոսականոնի գուրդային մէջ յետ «Եւ եւս խաղաղութեան» կը գրէ. «դպիրն՝ Կեցո Տէր, ժողովուրդն՝ Տէր ողորմեա». յետոյ կը մոռանայ ժողովուրդը: Զանազան մաղթանքներ «հասարակաց» կու տայ. բայց յայտնի չէ՝ միացեալ դասերուն՝ թէ ժողովրդեան եւս (Յաւ. Ա): Իսկ մեր ժամագրերը «դասին» մէջ՝ որ ընդհանուր է, կը դառնան «դպիրն»՝ մէկ հոգի, եւ անոր կու տան պատասխանել: Սակայն միարանութիւնը վր պակսի տակաւին ԺԳ-ԺԵ. դարերուն, որով Օչնի օրինակը դեռ «ժողովրդեան» կու տայ, եւ դուն ուրեք «դպիրն»: Մարիոնին եւ թ. 252 միջոց «դպիրն»՝ թէ՛ Ամէնը, թէ՛ Եւ ընդ հոգւոյդ քում եւ Առաջի քո տէրը: Իսկ Թ. Մեծոփեցին մաս մը «դպիրն» եւ մաս մ'ալ «ժողովրդեան»: Այս անունը ցանցաւորար կ'երեւի նաեւ աւելի անագան օրինակներու մէջ, ինչպէս է մեր 1663ի գրք-

(16) Ա. Կորնթ. ԺԳ. 16. Կարբուլ, Ա. 1561-63:

(17) Մեկն. Մատթէի, Ա. 496:

չաղիրը: Այդ խառնուրդն արդիւնք էր անկասկած բնագիրներու պատճառած չփոթութեան, որոնք դրուած էին հին ձեւով. իսկ գործնականին մէջ դպիրն էր արդէն պատասխանողն այդ շրջանին՝ ըստ Մարիոնի եւ զուգակից օրինակին:

Բ. Քրիստոնէութեան առաջին դարերուն հաւատացեալները ուրեք ուրեք կը ձայնակցէին երգերուն, արք եւ կանայք միանգամայն. այսինքն այնպիսի վայրեր, որոնց ժողովուրդները նքրացած երգեցողութեան արուեստին մէջ, կրնային վաճառել մասնակցել դպիրներու դասուն, ինչպէս ի Կեսարիա, Միլան, եւ այլուր՝ ըստ վկայութեան Բարսղի, Ամբրոսիոսի եւ այլոց: Ընդհանրապէս կային տեղեր՝ ուր այդ արդիւնքը էր կրնարուն (18): Իսկ Լաւողիկիոյ ժողովը բոլորովին խափանեց ժողովրդեան մասնակցութիւնը, կանոնելով այսպէս. «Մի՛ ոք սաղմոսեցէ յեկեղեցւոյ՝ բայց ի կանոնեալ փառասաց, ոյք յամբոնն ելանեն եւ սաղմոսեն գրովք» (ԺԵ): Նպատակն էր՝ յիշողութեամբ երգող ամբոխին պատճառած խառնակու-

թեան վերջ դնել, տալով երգել սաղմոսերգուաց միայն «գրովք»:

Այդ սահմանը կը զօրէր եւ մեր քով Ե. դարուն: Նախ քան դայդ մեր պաշտամանց լեզուն ըլլալով յունարէն եւ ասորերէն, արդէն չէր կարող ժողովուրդը ձայնակցել պաշտօնեաներուն հետ: Իսկ աղօթքներուն հալացումէն վերջ՝ հաւատացեալները լսելով վր վարժին սաղմոսներուն, եւ ըստ Փարպեցիի՝ կ'երգեն դանոնք ամենուրեք, բայց ոչ եկեղեցւոյ մէջ, ուր երգելու չափ յարմարութիւն չունէին: Այդ պատճառով ներքը կը լսուին լոկ «ձայնք պաշտօնէիցն», ինչպէս կը վկայէ Յղիշէն: Եւ մենք անկէ վերջ կը հանդիպինք ստէպ դպիրներու երգեցողութեան, բայց բնաւ ժողովրդեան, իսկ վիճակը իրենց տուններուն մէջ անգամ չէին համարձակիր ձայն բարձրացնել. եւ սաղմոսաց «միմունջը» միայն կը լսուէին անոնց բերաններէն՝ ըստ նոյն պատմիչին: Իսկ հետագայ դարերու վրայ աւելորդ է խորհիլ: Այս մասին աւելի ընդարձակօրէն գրած ենք այլուր (19): (Շարունակելի)

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

(18) Կարբուլ, Գ, 271. Բէումէր, Ա, 172:

(19) Բագմավէպ, 1917, 207: